ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՆԱԽԱՁԵՌՆՈՂԻ ՍԱՀՄԱՆԱԾ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԵՎ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԳՈՒՄԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2020 թվականի դեկտեմբերի 28-ին, ժամը 11:00-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի ավարտից մեկ ժամ հետո Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելու վերաբերյալ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությունը, ինչպես նաև Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցության «2020 թվականի դեկտեմբերի 28-ին, ժամը 11:00-ին գումարված արտահերթ նստաշրջանի ավարտից մեկ ժամ հետո Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելու և օրենքի նախագծերը երկրորդ ընթերցմամբ քննարկելու վերաբերյալ Ազգային ժողովի խորհրդին միջնորդություն ներկայացնելու մասին» որոշումը, առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը որոշում է.

Համաձայնություն տալ 2020 թվականի դեկտեմբերի 28-ին, ժամը 11:00-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի ավարտից մեկ ժամ հետո, նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվական, դեկտեմբերի 29
Երևան
ԱԺԽՈ-072 -Լ